

신정출판사  
서울특별시 중구 남대문로 2가 11-1  
우편번호 150-801

신정출판사  
서울특별시 중구 남대문로 2가 11-1

# Հ Ա Ի Ա Ք Ա Ծ Ո Յ

## ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ

Դ.

Ա. ԶԱՐԹՈՆՔԻ ՇՐՋԱՆ

Բ. ԻՐԱՊԱՇՏՆԵՐ

Գ. ԳԱԻԱԹԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դ. ԳԵՂԱՊԱՇՏՆԵՐ



ՎԵՐԺԻՆ ՏԷՕՇԷՄԷՃԵԱՆ

Տպագր. մասնաշաղկապ Հիմնարկի «ՅԱԿՈՒՅ ԱՐԷՎԵԱՆ» տպարան  
ԻՍԹԱՆԲՆՊՈՒՆԷ

1974



## ՈՒՍՈՒՑՉԱՑ ՄԻՈՒԹԵՆԷՆ

Ներկայ Դ. հատորով կ'աւարտի, երբեմնի գրականութեան հմուտ ուսուցիչ եւ Սահակեան Լիսէինախկին բազմավաստակ տնօրէնուհի Տիկին Վերժին Տէօշէմէճեանի «Հաւաքածոյ Արեւմտահայ Գրողներու» հատորներուն տպագրութեան շարքը:

Ինչպէս նախորդ հատորներու տպագրութեամբ յայտնած էինք, յարգելի Տիկին Վերժին Տէօշէմէճեան, գրականութեան այս չորս հատորներու հրատարակութեան իր հեղինակի իրաւունքը նուիրած է Ուսուցչաց Միութեանս:

Կրնանք անկեղծօրէն խոստովանիլ թէ այս չորս գեղեցիկ գրքերը ուրիշ բազմաթիւ գրական գործերու նման անտիպ պիտի մնային, եթէ չունենայինք գրասէր բարերար ամուլ մը Տէր եւ Տիկին Յովհաննէս Չիլինկիրեան, որոնք սիրով ստանձնեցին ինչպէս նախորդ երեքին, նոյնպէս ներկայ հատորին տպագրութեան բոլոր ծախքերը, ի յիշատակ իրենց ողբացեալ հօր Տիար Գրաբոս Չիլինկիրեանի:

Հրապարակաւ կը յայտնենք մեր խորին շնորհակալիքն ու երախտիքը թէ հեղինակին եւ թէ վեհանձն մեկենասներուն:

Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԹՐԲԱՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ



**ՌՈՒՐԷՆ ԶԻՂԻՆԿԻՐԵԱՆ**  
(ՈՅԻԱԿ)  
(1885 - 1915)

ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿ գրական անունով հանչուած՝ ծնած է Մարմարայի եզերքը գտնուող Սիլվիի գիւղաւայաքը: Աշակերտած է Պերոյեբան վարժարանի: 1905ին կ'անցնի Լոզան բժշկութեան նեխեղաւ համար: 1911ին կ'աւարտէ հասնալորտանը: Լոզանն աշխատակցած է Բոքանգուլի գրական քերթեալն եւ ընկիր արձակագրի անուն հանած է իր Բժիշկին Գիտֆէն ՓՐՅՈՒԱՆ Էջերով եւ բանաստեղծի անուն՝ իր ասանաւորներով որով մնացած են ցրտած պարբերաբերաւ մեջ:

Ռուրեն Սեւակի կերպարեան նկարագիրը համաժարակային տառադանկը երգելու ձգտումներ կը պարզէ: Իր բանաստեղծութիւնները արտայայտեան ձեռի կատարելութիւնն ու լեզուական ծնունդը գտնուած զանազան կերպարներու, հոգեկան տարումներու տարբիւն, բնութեան պատճառով ու սիրային զգացումի յիստիկոնիս ունին իրենց խորք:

Կէս գիշերէ վերջ մըն էր, խոնաւ գիշեր մ'անծրելի,  
 Լապտերին թաց լոյսին տակ կանգնեք էիր տրտմովի.  
 Զուրը կ'երգէր մայթին վրայ, հոս հոն վազքն էր կառքերուն  
 Կ'սպասէիր դուն այդ ա'փ մը հողիդ շուրջ դեզերուն:  
 Բռնի ժպիտ մը կու լար աչքերուդ խո'րը ծաւի,  
 Ներկուած լիրք շրթներուդ վրայ պրկումը կար ցաւի,  
 Ու անտակ չբփակիդ զոյգ սահանքին տակ սխրուն՝  
 Յայտքը չիկար այդ գիշեր ցայգազըւարն կիրքերուն:  
 Կ'սպասէիր դուն պատրաստ ու համակե'րպ ու հըլու,  
 Առանց սիրոյ ընտրութեան, նուիրուելու համար կո'յր  
 Այն բարեհաճ Ալուին որ հաց ունէր քեզ տալու...:  
 Գութի, կիրքի պէս տարտամ բոց մ'զգացի սրտէս ներս՝  
 Ու թերե'ւս այս գիշեր նուիրուէի քեզի, քոյր,  
 Եթէ կաթիլ մը արցունք չը սառեցնեք իմ այտերս...:  
 Կէս - գիշերէ վերջ մըն էր, խոնաւ գիշեր մ'անծրելի...:

Ռ. ՍԵՒԱԿ

... Ո'վ կընոջ սիրտ, պաշտամունքով արցունքով  
 Ու կեղծիքով հրաշակերտուած սի'րտ ազուոր,  
 Ուր կարկաչող սիրոյ չքնաղ ակին քով  
 Մոռացութեան անդունդը կայ ահաւոր:

Ռ. ՍԵՒԱԿ

# ԱՐԳԱՍԱՒՈՐՈՒՄ

ԹԷՈՒԿԻՆ

Մառախուղի առաւօտով, ծն՛ք ծիւերը կը բաշեն,  
Դանդա՛ղ, անիւր չի նսար ծիւնին վրայ: Միայն շէ՛ն,  
Խարազանն է որ կը խօսի բաց օդերու մտայլ սուզին:  
Ու կ'երկա՛րի նամբան, մինա՛կ անհորիզոն, անազին:

Ինքնասուզուա՛ծ, նախատիպար այդ կատրին մէջ զիւզաշէն,  
Ես կը դիտեմ սառած ծիւերը կախուած իրենց լա՛յն բաշէն:  
Մեր, կը բաշեն: Խեղճ ամօլը: Աճն Արուն է, ձախն էզին  
Խորշում Մաղիկը կ'երեւայ, պոչին շարժքէն, ցաւազին...:

Հալածուա՛ծ զոյգ: Ու կը խորնիմ թէ այդ երկուքը միայն  
Մշտնջական Տառապանքն է զոր կը տանին լուսւայն,  
Եւ թէ մէկը միւսին բաւ է՝ խեղճ բնազդի մը հըլլու՛:

Տառապազին սերունդի մը ամբողջ սերմը դնելու...:  
Այսպէս, թշուա՛ռ. արքայափառ մտրակի մը ներքեւ շէ՛ն,  
Յախտեանին Անէժքն իրենց Արգանդին մէջ ախտաշէն,

Մառախուղի առաւօտով, ծեր ծիւերը կը բաշեն...:

1 Հոկտ. 1908

Թ. ՍԵՒԱԿ

ԲԱՆԱՍՏԵՂԻՄ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՄ

Թրուպատուրնե՛րն են, տեսէ՛ր. իրենք են,  
Եւանդո՛ւն, անխո՛յթ զո՞ն կը նուագեն  
Հրակէզ արեւուն տակ հրապարակին,  
Կիսխուփ փեղկերէ տարեց, տղայ, կին  
Կ'երեւան թիչ թիչ, կէս - օրի տապէն  
Շատ թիչերն են որ տեսնել կ'շտապեն  
Թրուպատուրները:

Տարօրէն դէմքեր, Ամէնքն, էզ, արու,  
Բազդէն Կատաղի հալածուողներու  
Անտուն ընտանիք մը քայլամուտը:  
Փոզոցի ստո՛յգ նանճարներ ըլլոր.  
Նուագելու համար պէտք չունին նօթի,  
Կ'ապրին երգելով, կը մենսին նօթի  
Թրուպատուրները:

Բախտը, տառագանքն, յարստի՛խ հովը  
Իրենց դէմքին մո՛ւլթ ժպիտ մ'են տուեր:  
Կեանքը ճանչցողի աչկո՛ծ ժրպիտ:  
Ու իրենց ընծի ձե՛ին մէջ հուպիտ.  
Խախ մաշերնուն ներքեւ ալետը,  
Աշխարհքն հեզնելու հո՛վ մ'ունին ազուր  
Թրուպատուրները:

Անոնք երգելո՛վ անցան համօրէն  
Բօյի գինեզուարճ այգեստաններէն  
Մինչեւ Եեզոսի աւազուտը շէկ.  
Մինչեւ Ուրալներն, մինչեւ հրաշէկ  
Ափերը դերքուկ Հրոյ երկիրին.  
Քանի ընկերներ համբան հող դրին  
Թրուպատուրները:

---

*Troubadour* ներք հարաւայիմ Ֆրանսայի յսծնչգակ աշուղներ էին Միչին դարում մշչ. և խօսածիմ ոկեան լեզուն էր (*Langue d'oc*): Կչ դեզերէիմ գզեակէ դչեակ երգելու համար իքննց բերքումննքը — հնչեակ, հովուերգ, շէր.— եւ իրենց արուեստը կչ կուչիմ «Ջուաղք գրակամութիւմ»:



Մեքենայութեան այս դարը երկա՛ր  
Չ՛ընկճեց զևս իրենց հողին խանդակաթ  
Ու ստաններու մինչև դրամապաշտ՝  
Թշուառութեան հետ զո՛ւխ զլխի հաշտ  
Կապրին նախնական կենցաղով ազատ.  
Ազատ բնութեան որբերն հարսզատ  
Թրուպատուրները:

— Առէք ինձ ձեզ հետ, երկիրէ երկիր  
Տարէք այս թշուա՛ն սիրտըս սրգակիր.  
Ապրի՛նք հեզնելով, ողբանքն բզելով  
Ու երկրագունդին հետ մշտահողով  
Մեր մորթն անօգուտ բրշե՛նք մշտերնը.  
Մշտնչննական մո՛ւլթ ուխտաւորներ.  
Թրուպատուրները:

Զի մենք ենք. մենք ենք, բանաստեղծ. սուէտ,  
Մե՛նք, պատառատուն բե՛նեղով վէ՛տ վէ՛տ  
Երգի իշխաններ՝ խպառ հալածուած.  
Մենք, նօթի՛ հպա՛րտ, երբմնի Աստուա՛ծ,  
Մե՛նք, չըհասկցուած, մե՛նք Եղերական.  
Մե՛նք, Բանաստեղծներ, մենք ենք իրական  
Թրուպատուրները:

Մե՛նք՝ որ մեր վէրքէն երգեր կը շինենք  
Մե՛նք, զրկուածներ նակատագրէն նենգ,  
Ու մինչ ուրիշներ առատ կը ջամբեն  
Խինդի՛ սեղանէն, մուսայի նամբէ՛ն  
Մենք կ'երթանք սոո՛յգ Մահուան անտուաղ.  
Մե՛նք, հին Մարգկութեան ո՛ւշ ծընած - աւաղ -  
Թրուպատուրները:

Բայց ին՛չ փոյթ: Մենք ենք հողիով հարուստ.  
Մե՛րն է ներշնչումն սր կու գայ վերուստ.  
Մե՛րն է մարգը թա՛ց. վերջալոյսն անխօ՛ս,  
Փթիթը վարդ՛ին, առուն մշտահո՛ս.  
Մե՛րն է մթին սի՛ւրբ գերեզմանին.  
Հի՛ն աստուածներու ցեղին կը նմանին  
Թրուպատուրները:

Մե՛նք ենք որ անփո՛յթ զրջով կը հեզնենք  
Այս նենգ աշխարհին պսակները նենգ :  
Քնար մը ձեռքերնիս, անտո՛ւն, մահագի՛ն,  
Ձենք ցանկար ստրուկ – պետի դղեակին :  
Ազատ բարբառի ասպետներ անա՛հ,  
Կ'ապրին մեռնելո՛վ, կը մեռնին անմա՛հ  
Թրուպատուրները :

Մարդկութեան հտպի՛տ պէտք է անպատճառ :  
Մեր սրտերը մենք հաներ ենք վաճառ :  
Մեր վիշտն, սուգէն, խաբուած սէրէն նենգ՝  
Ռամիկին համար երգե՛ր կը շինենք :  
Ո՛վ բառ «Մահը մի է» . ամէն օր  
Կը մեռնինք մե՛նք, հի՛ն տիեզերքին նո՛ր  
Թրուպատուրները :

Սակայն մեզ ի՛նչ փոյթ ծիծաղն ամէնուն,  
Էքումը ստո՛ր, բաղցր անանուն :  
Մենք՝ զառանց հոգուէն պէս սիրագործով՝  
Հաւատքն ունինք մեր սրինգին ծայրով  
Սոսշտորդելու մարդկութիւնն ամբո՛ղջ :  
Մեռա՛ծ արուեստին մե՛նք տակաւին ո՛ղջ  
Թրուպատուրները :

Աս ի՛նչ դարերու հասեր ենք, Աստուած,  
Փշրեցի՛ն ինչ որ կար վսեմ կերտուած :  
Թէ դեռ սիրտ ունիք՝ թաղելու տարէք,  
Ոսկիին նենգ ծայնն է ամէնուրեք  
Մի՛ միայն մե՛նք ենք որ դեռ անարգել  
Միրելի կ'երազենք, ո՛վ կ'ուզէ սիրել  
Թրուպատուրները :

Մեռա՛ր, հնաւանդ Արուեստ սրբանուէր,  
Երբ դեռ կեանքն երգո՛վ կ'ապրէր կ'օրօրուէր,  
Ու երբ երջանի՛կ, թափառի՛կ, զինո՛վ,  
Իրենց ծիրանի լայն կրկնոցներով  
Դղեակէ դղեա՛կ, փայտի երկնային  
Տաւիղին թրթռումը կը տանէին  
Թրուպատուրները :

Ես կ'երազեմ Հայր Քրուպատուրն Հոմեր .  
Որ աստուածներու ակէն կը խմէր  
Ու իր հսկաները բարձրագագա՛կ  
Կ'երգէր տաւղին վրայ, քաղաքէ քաղաք :  
Ու թրուպատուրները ըիւր՝ որ կ'երթան  
Գարերու մէջէն, կ'երազեմ Գողթան

Քրուպատուրները :

Կ'երազեմ՝ զիրենք, ու լո՛ւս, շուարտն  
Կը նայիմ փեղկէս ա՛յս թշուառներուն  
Որ բռնի կերպով կ'երգեն, կը խաղան,  
— Վա՛խ, արձախն Արուստն հանեց կախաղան,  
Հի՛ն, աստուածարքնա՛կ դարերը մեռան .  
Ու սիմա պէտք է խնդացնեն, մութան .

Քրուպատուրները :

Հրատապ արեւուն տակ հրապարակին,  
Անա՛ կ'երգեն դեռ, ու մինչ տղա՛յ, կին,  
Կը հասնին թիչ թիչ նեղ ճամբաներէ,  
Գլխարկն անցորդին լու՛ս կը կարկատէ  
Իրենց նահապետ երգիչն ալեւոր  
— Տու՛ք, իրեն՝ք են, նոր մարդկութեան նո՛ր  
Քրուպատուրները :

Լօզան 18 Յոսիսոս, 1910

Ռ. ԱՆԻԱԿ

## ՀԻՆ ԵՂԱՆԱԿ

Այս գիշեր երգ մը հոգեցունց  
Հոգին մէջէն՝ հետուէ հետու՝  
Ձիւնտա, արտում ճամբաներու  
Խոր անըջ անքը արթնցուց:

Եւ մենաւոր ու արտամուտակ,  
Քեզ կ'ունկընդրեմ պատուհանէս  
Որ ազօթ քի մ'սրբիքին պէս  
Կ'արձագանդես, հին եղանակ:

Արուեստ չունիս, խմտտ չունիս,  
Կը կրկնուիս դուն անցողորում,  
Ու ձիւնին հետ դանդաղ, արտում,  
Դուն սարուբեր կը ստատանիս:

Շնչատ մարմինդ կը դողողէ...  
Վանկերուդ մէջ ամոզչն, վախս,  
Ու յանկերդիդ մէջ միամիտ  
Ապրելուն խուլ մահերգը չէ'...

Կը կրկնէ հոփն աննպատակ,  
Ազագանկներդ ծտին, սարին,  
Ի՛նչ կը սրտամեա դուն գիշերին  
Որ կու լայ մայթը հեքիդ սակ:

Այս իրիկուն, ձիւն իրիկուն,  
Հին եղանակ մը հոգեցունց,  
Մոջլ երազանքը արթնցուց  
Մութ, ամայի ճամբաներուն:

Երգը մեռաւ հետուն, անհետ,  
Բայց այդ չափով, այդ յանկերգով,  
Պատուհանիս գիշերին քով,  
Հոգիս կու լայ դեռ երգին հետ...:

ՌՈՒԲԷՆ ՍԵՒՍԿ

## ԵՐԹԱՆ

Երթալ, երթալ, երթալ անձայն, անձանդէս:

Երթալ աստին պէս մարդերու ասկ անտես:

Կարգարտին մէջ՝ հեզ, հողմեովար ամպին պէս...

Երթա՛լ՝ ասանց գիտնալու թէ գէտի ս'եր:

Երթալ հետու սասաններէն այս արխար:

Երթա՛լ խաւար գիշերին մէջ թաքթաքուր...

Երթա՛լ, երթա՛լ, երթա՛լ ասանց ճրագի:

Երթա՛լ ասանց սուգի, լացի, փափաքի:

Երթա՛լ՝ ասանց սովի, պապակի...

Երթա՛լ՝ մարդոց կոչտին մէջէն լըսելեայն:

Օտար մընայ իրենց ցտին, Գիտս թեան:

Երթա՛լ արդեա, խալ, համբը, կոյր յախտեան...

Ձըգիտնալ որ հոս Իտէալը շիկայ...

Ու խաղանայ երթալ ամերն հետակայ,

'Իէտի ուզին երջանկութեան մշտակայ...

Աննի, թանա՛լ, անըջանա՛լ, վըսեմ, վես:

Երթալ անցա՛յգ, անա՛յգ, երթալ վերջապէս

Աշքերը գոց՝ ցայգաչրջիկ խեղճին պէս...

Երթա՛լ՝ երթա՛լ չը ճանչնալ Մարգ ու Աստուած,

Ջուրը երթալ՝ քո՛յր ձեռքը ձեռքի մէջ դըրած

Անըջանա՛լ ու Արթոյն պէս Աքսորուած...

Ու. ՍԵՒՍԿ

ԳՆՏՏԵՅԻՒՆ — Գլխագրուած՝ մարդկային ծանօտութեան անդրաբխը:

ՀԵՆՆԵՅՆ ՍԵՆՏ — Անուանութեան մէջ տեղեք

ՄՇՏԱԿԱՆ ԵՐԺԱՆԿԱՅԻՆՈՒԹԵԱՆ ՈՒԼԻՆ — Բանաստեղծը կը հուսաւ թէ անձեռ կը թռչանկարիւն մը կայ, տիեզերքին մէջ տեղ մը, եւ ոտի իր նստեան ուր կ'ուզէ ուղղել ան իր բայերը:

ԱՆՔԱՆԹ — Գլխագրուած՝ բնագրութեան իր իմաստը մօտ է կրօնական խոստացուած յախտնեակներեան: Հոս՝ միւրապէս աշխարհիկ հետու աշխարհներ:

ՍԵՐ — Գլխագրուած՝ կը ձգտի բելադոնա ամենէն մեծ օրէմնեշէն մէկը տիեզերքին, որով իրար կը ձգտին, կը ձգտին մարմնները:

ԱՐՄՈՐԱՆՆԵՆ — Կը բելադոնա դրամալէն սաստորտիկը նախաձեռնեցուած արտաքին ետին նոր դրամա մը փնտռողի օրիշ ալ բելադոնա մը:

## ՍԻՐՈՅ ՈՒ ՄԱՀՈՒԱՆ ԵՐԳԸ

Իմ կեանքըս թող ազաշուար երգ մ'ըլլայ,  
Եզերական ու միամիտ, սև ոգրերդ,  
Հսկայական ու փոքրէն քաղցրը վէրք՝  
Իմ սիրտըս թող անհունին մէջ վէրք մ'ըլլայ,  
Իմ կեանքըս թող ազաշուար երգ մ'ըլլայ...

Ես կը սիրեմ իմ արամուծիւնս դիւթական,  
Իմ արամուծիւնս Աստուածներու զուին պէս,  
Քո՛յր, սրտիս մէջ ի՛նչ խաւարներ, վիհեր կան,  
Զոր նայուածքովդ կ'ոսկեզօծես ու կ'օրհնես,  
Ես կը սիրեմ իմ արամուծիւնս դիւթական...

Եկո՛ւր ինձի, լուսնակին պէս գեղեցիկ,  
Եկո՛ւր ինձի, լո՛յս ու ցնձում հեւարով  
Քու արծաթի շողերուց մէջ սլացիկ  
Լուսաօրէ՛ աւերակներըս լալո՛վ՝  
Ես մահն եմ, ե՛կ ինձ կեանքին պէս գեղեցիկ...

Իմ կեանքս թող առուին երգին պէս ըլլայ,  
Ու երգս անուանդ կրկնումն ըլլայ թող յաւե՛րժ,  
Իմ կեանքս թող մո՛ւլթ ջրվէժին պէս ըլլայ,  
Ու գէտի քեզ անկում մ'ըլլայ գանձվէ՛ժ,

Իմ կեանքըս թող առուին երգին պէս ըլլայ...  
Ես կը սիրեմ երկու աչքերդ վիհի՛ պէս,  
Ուր խաւարներ կը փոթորկին մոլեղին՝  
Երկու աչքիդ՝ տատուածներու սկիհի՛ն պէս,

Տո՛ւր ինձ անոնց մէջ սրբացնել իմ հոգին,  
Ե՛ս կը սիրեմ երկու աչքերդ վիհի պէս...  
Եկո՛ւր ինձի, քեզ կ'ըղձայ շունչս անդօր  
Եկո՛ւր, ես մո՛ւլթ բաներ պիտի քեզ ըսեմ

Մի՛րոյ պէս քաղցր ու Մահուան պէս հօր՝  
Գերեզմանիս լացող սիւքին պէս նըսեմ

Այնուր ինձի, քեզ կ'ըզձայ շունչս անգոր...  
Ի՞մ կեանքըս թող կորած նաւուն պէս ըլլայ:

Շունչդ սուեցնէ ծեր սասաղասորս անա՛հ,  
Մի՛ մի՛ լրսեր յագնած հողիս որ կու լայ:  
Տար դիս Սիրոյ կողմնեքէն գէպի Մահ,  
Ի՞մ կեանքըս թող կորած նաւուն պէս ըլլայ...:

Ռ. ԱՆԻԱԿ

## ՏՐՏՈՒՄ ՈԳԻ

Թափառամուլ ճամբուս վրայ քերթողի  
Տրտում ոգի, ահա դարձեալ դրասայ քեզ-  
Հոն ուր քեզի օր մը մինակ ես թողի,  
Քարին վրայ, ազբուրին մօտ, կը շիշե՞ս :

Մեր հրամեշտի օրէն ի վեր դուն այսպէս՝  
Հետուն յասած մութ աչքերդ սեւածիր՝  
Ըտորսեցիր ճամբուս վրայ արամապէս,  
Ու արցունքիդ լըսիկ երզը միշտ լացիր :

Ես հեռացայ տարտամին մէջ խալարար,  
Իմ երազիս ճամբաներէն անդադրում,  
Գիշերներու հովին նման խալարար,  
Վերջարյսի թռչուններուն պէս արտում :

Ու վաղեցի - անուրջներու ուխտաւոր-  
Թաշին վրրայ կեանքի ծնծդուն մօրմանդին,  
Ու վերքերուս ծագիկները ախտաւոր  
Տարի մինչեւ հորիզոնները մութին :

Ես խոյացայ նսիրումէս տենդահար՝  
Հոն ուր նինար ճառագայթ մը կայ լոյսի,  
Հոն ուր սիրոյ վախա երզ մը կը դողար,  
Հոն ուր գողգոջ ծիածան մը կար յոյսի . . . :

Ու թեւարեկ ահա քեզի կը դառնամ  
Երջանկութեան ճամբաներէն յետադարձ,  
Տրտում ոգի, հողույս միակ բարեկամ,  
Դո՛ւն իրակամ, դո՛ւն ճշմարիտ, դո՛ւն անգա՛րձ :

Ձեռքերուս մէջ գի՛ր ձեռքերդ մանթոյր,  
Ու հոգեդէն շրթունքներդ շրթունքիս,  
Երակներուս մէջ՝ քու շունչդ արամաթոյր,  
Արցունքներուդ բխրեղին մէջ՝ իմ հոգիս . . . :

Տրտում ոգի, թեւըդ թեւիս դալարո՛ւն,  
Համբոյրի մը աննունին մէջ սրբաւէտ,  
Մեր ցաւերուն, արցունքներուն, վերքերուն  
Պատարապը պիտի ասենք քեզի հետ . . .

ՌՈՒԲԷՆ ՍԵՒՅԿ



## ՀԱՅՐԸ

Ասանդովան մ'ալեհեմ, գուրս գլեհով, բոմբ - բոմբ  
Մթին վաղոց մը, քարի նստումի մը վրան,  
Իրեն խախտել կողին վրայ ընկողմանած եր արքուն,  
Երբ ապաստան վնասեց հան նիմար սղայ մը անտուն:

Ետարին մեջ նայումսմենեմ իրար զարկին, շաչեցան...  
Մերք նեռու քաղցրեց հիւանդ մարմինն իր անձայն,  
Ճանչցե եր, բայց չի կրցաւ քեղ՝ Պեղեակ մտրուան,  
Չառակս ես, զոր լինցի անօրոքեանն օրերուն...»

Թռուառոքեան հիրքնիկալ նստումին վրայ քարի,  
Կեանքի խաւար գլեհով, Մարզն ու Աստուծոք բարի,  
Պատահաբար, կող կողի, երբոք զիրար տեսնային,

Ենովան իր լուսեղեն պրասկին մեջ երկնային՝  
Ձե՛ր անչևար քեղու բռուտ, անե՛ր խեղն Մարզուն  
Վես կմ Իու Հայր Արարիչդ, ամենակալ մեսաբուն...

Ռ. ԱՆԻԱԿ

## ԵՆՈՎԱՅԻՆ ԱՐՑՈՒՆՔԸ

Երբ բոլորն այ տոլին համարն այդ օրուան  
Աստուածասուր իրենց զոս զոս պատեօնին,  
Ու երբ Տեաւոց Տերք, հօգը եկովան՝  
Կը ժայտէր զոն - նասաւ խորեակ քաղաւթին:

Շէկ մազերու ծով մ'ունէր ան բոցահեր,  
Կուրծին վահան մը հըրօտեկ առորի,  
Գեճեճը կար աչքերուն խորն անվեճեր,  
Ու իր օտնէին տուեւաթին մեջ վայրի:

Ենովայի լոկց ասեանն ունկնդիր.  
Ու երբ նշան քրտ հեկնից արեայն մեծ՝  
Խորեակ - դժխոյն նովասն հակից ձնեղպիր,  
Ու միակերպ ու անայլայլ ան պատմեց.—

— Ամեն տեղ կեանք տեսայ, խայտանք ու ժպիտ.  
Մարին վերեւ, ծործորին մեջ ալիլն հով,  
Շուտան, սմբուկ կը խնկային միամիտ,  
Ու լեյակներ կ'երգէին խայտանքով:

Ու քիթուկիկ, միջոտ, ծաղիկ ու քոչուճ  
Կը ձձէին երանութիւն մ'անհրնար.  
«Փո՞րթն էր իրենց Տիեզերքին մեծ ինչո՞ւն...»  
Երանութի՛ւն զոր մեկն դեռ հոս չեմ նանչնար...

Ու լսեցի որ վայրի վազը կ'ըսէր.  
«Ի՛նչ աղուտ է...» կ'ըսէր վազը նովերուն.  
«Ի՛նչ աղուտ է...» կը կրկնէր հովն հեռատէր՝  
Փայլալեզու լայն մեղաստանն օրօր՛ւն:

Մուտքի դուռ, մագլցեցայ սարն ի վեր,  
Քայլերուս սակ հեծեց արօրն լեճնազոյն.  
Յզրիքներուն երգը լոկց կարեօվեր.  
Մոխիր տեղաց ծաղիկներուն վրայ գոյն գոյն:

Ու դառնեալ անվառուճակ շխդերէն  
Միևչեւ հոբարս ետրվայսներ չեաւն,  
Իտեց ցօղին վրայ խարեցան տեսօրէն,  
Դողդղացին, ու համբարխա տակ մեռան:  
Օղին մեջ հոտն էր խարակուող ծիլերուն...  
Ու լսեցի որ «խեղն վարդեր...» կը նծծէր  
Յետին քոչունն. որ կը վախեր շուարուն...  
Եւ կիլեցի, քու նրամանդ այս էր...»

\*  
\* \*

Ննովան մութ ժրպիտ մ'քրաւ անգլաւծ...  
Ու երբոր դուրս ելան բոլորն ալ հլու,  
Իր հողին զե՛ն անձամօք պիտ մը զգաց,  
Նուտասացուցիչ, անուկի պիտեր լսուա...

Ռ. ՍԵՒԱԿ

## ԲԺԻՇԿԻՆ ԳԻՐՔԷՆ ՓՐՑՈՒԱԾ ԷԶԵՐ

ՄԵՌՅՆԵԼՈՒ ԻՐԱՆՈՒՆՔԸ

— Պզտիկուց ծորակ խաղացա՞ծ էք, Տօրթէօր, Վագուհ աղբիւրի մը բերանը մատով խցել փորձա՞ծ էք: Զուլալ ջուրներու ցայտըր աչքերնուդ մէջ զգացա՞ծ էք...: Երեւակայեցէք որ զեռանցամ տարի ծորակ կը խաղայինք արիւնի նետ...:

Այսպէս խօսողը յիստննոց մարդ մըն էր. աղ-պղպեղ գլուխով, բարի եւ խոշոր, ու տժգոյն, ու աժգոյն...:

Գուլկարիոյ չեմ գիտեր որ անկիւնէն կու գար ինծի՝ դանդաղ հիւանդութեան մը համար որ բոլորովին ջլատեր, յուսահատեցուցեր, սարսափեցուցեր էր այդ հին զինուորականը:

— Հիմայ, աչքերս սեւ կը տեսնեն, կ'ըսէք, ծունկերս կը կտրուին, մտքիս գէշ խորհուրդներ կու դան: Հաւատացէք ինծի որ ձեզի գալու համար համբարդած ատենն՝ կը զգուշանայի շոգնաւին եզրը երթալէ, որպէսզի ծով շնտուիմ յանկարծ...:

Ու իրաւ ալ այնքան յուսահատութիւն կար անոր աչքերուն մէջ, որ բիշ մը բոց տալու համար իր կանանչորակ այտերուն՝ հին պատերազմներու յիշողութիւնները կը հարցնէի իրեն:

— Հա՛, բաւ, ձեզի արիւնի շատրուան մը պիտի պատմէի, բժիշկ էք, կը նետարբորուիք: Մա անիծած արիւնը որ երակներուս մէջ կը շրջագայի՝ գիտէ՛ք որքան ոյժ ունի, չէ վտահ եմ որ չէք գիտեր: Ասիկա գիրքերով չէ, փորձառութիւնով կը սորվուի: Օր մը ձեռքակալներ էինք թշնամի երիտասարդ մը որ մեր ընկերներէն երեքը մեռցուցեր էր: Թուխ, հպարտ, գեղեցիկ տղայ մըն էր. գլուխդ ձուկ բսի, նժոյզի մը վիզին պէս սխտր կտրցուց: Մուրս այնպէս մը տեղին իջեցուցի որ Մայրիկ պոռալով գլուխը կախուեցաւ: Ու արիւնը սկսաւ վիզին վեր ցատքել շեփ-շիտակ, բարձր, բայց շատ բարձր. մարդաստակ ծառի մը պէս բարձր: Զոչալով ձեռքս խօկոյն վէրքին վրայ թխմեցի. սակայն արիւնն այնքան ուժով էր, այնքան ուժով, որ մեռելին իւրբանջիւր թօթվրտուրին մատերս վեր - վեր կը հրէր: Հապճեպով մէկ ձեռքիս վրայէն՝ միւս ափս ալ դրի գալարուող վիզին վրայ. այն ատեն արիւնը մատներուս մէջտեղուանքէն սկսաւ սրտիլ շատրուանի մը ջուրներուն պէս, ունեկերուս, ալիաներուս ու բերնիս մէջ, թարթիչներուս ու պեխերուս թե-

լերուն վրայ, աշուճնեցուս փոսերուն մէջ, կաթած տեղը թանձ-  
բանալով, շրթունքներուս փակցնելով, երեսներս տաքցնելով...  
Բայց, ի՞նչ, կը տոճգունիք Տօրթէտ...:

— Մ'ն, դագրեցուցէք դագրեցուցէք՝ զգուելի՛ք է զգուելի՛ք...:

— Զգուելի՛ք բո՛հր...: Պատերազմը պատերազմ է Տօրթէտ  
...: Զգուելին ա՛յն է երբ մարդ ինծի պէս հիւանդութենէ կը  
մեանի, երբ փախերով ու վատելով, գեղազործի սրուակներուն  
փարելով, կամաց-կամաց, կաթիլ-կաթիլ կը մեանի...: Եւ  
յետոյ ես ձեզի բան մը բռնմ, Տօրթէտ, ամէն բան պարագային  
համեմատ պիտը է դատուի, նոյն իսկ ոճիբը: Ես այսպիսի պա-  
րագաներու մէջ գտնուեցայ որ չսպաննելը աւելի մեծ ոճիբ է  
բան սպաննելը...: Ես ձեզի այնպիսի ոճիբ մը պիտի պատմեմ  
որուն քով իմ ըրածս պարզ խաղալիք մ է տղու...: Կ'ուզէ՞ք...:

— Կ'ուզեմ, բսի անհամբեր:

— Եկարագրած շատրուանէս բանի մը շարաթ վերջն էր:  
Նաճանջի սրամանը եկած էր հիմայ, բանակը բաշուեր, հետացեր  
էր ցնրմակ հորիզոնին ետին, ձիւնապատ անազին տարածու-  
թիւններուն մէջ բանի մը խումբ վերջապահներ ձգելով թշնա-  
միին արշալին դէմ: Այդ ցրուած, կորած խմբակներէն մէկն ալ  
մենք էինք: Բայց ինչ որ ամէնէն աւելի կը փտանգեր մեր դիր-  
քը՝ վիրաւոր ընկեր մըն էր: Աչ կարելի էր բաշեցնել զինքը, ո՛չ  
ալ թշնամիին ու ձիւնին լքել: Անձ բան մը վըրի վըրքը, բայց  
մէջը հող ու սոյր գացած ըլլալով՝ վիրաւորը օտարտիւնի պըր-  
կումներ կ'ունենար, Նախ երեսին մկանները կձկուեցան. յետոյ  
ճակոթին կնճիւնները ծալք-ծալք գամուած մնացին: Աչերն այն-  
պէս անշարժ էին ու այնպէս ալ աճաւոր՝ որ հոգեվարք մ'իր հըրզ-  
նածածակն մէջ քար կտրեր էր կարծես: Ու այդ փոթ-փոթ ճակ-  
ոթին տակ, ու այդ պիշ-պիշ աչերուն տակ, բերանն այնպէս վար  
բաշուեր էր երկու ծայրերէն՝ որ դիւային բրբիջի մը գիմակն  
ըլլար կարծես ան: Գլուխն ետև նետուած էր, վիզն ուժգնօրէն  
պրկուած, աղեղի պէս կորնթարդ մարմինն համակ բարացած,  
գարջապարն ու զանկը լոկ կը զպլէին զետնին...: Հիւանդապահ  
կառերը բաշուեր էին, ամէնքն ալ, վիրաբոյժ մը թողլով մեզի:  
Աստուծու պէս իր ձեռքերուն կը փարէինք, իր աչերուն կը յա-  
ռէինք, նար մը, հարակ մը կ'աղերսէինք: Խեբանա. . . » կը վըն-  
ռէր ան: Ու այս բառը ախտանիշ մը եւ մահանիշ մ էր նոյն ա-  
տեն: Եւ ամէն անգամ որ զետնաբարձ վիրաւոր իր գարջապար-  
ներուն վրայ կը պրկուէր, կ'աղեղանար ու կը գողղղար՝ ծայրը

գետին մխուած սուսերի մը պէս .— Օւիսսօփօնոս . > կը գոչէր վիրաբոյժը , ազատում չկայ . . . :

— Եթէ ազատում չկայ , մի՛ ձգէք որ այս խնդը հոգեկարբ շան պէս չարչրկուի . սրսկում մը , դեղ մ'ըրէք , վեզը կարեցէք , բայց ազատեցէք զինքը , եւ ազատեցէք մեզ ալ . . . :

— Եթէ դուք ազատուիլ կ'ուզէք , կ'ըսէք . ո՞վ կ'արգիլէ զձեզ մեկնելէ . ես իր բով պլտի մնամ մինչև իր վերջին շունչը . բայց ես չունիմ Մեոցնիւու իրաւունք . ես կ'եանքին պատօսնեան եմ . . . :

Արդ , ես հիմայ ձեզի հարց կու տամ , տօքթէօր , եթէ դուք ըլլայիք այդ վիրաբոյժին տեղը , դո՞ւք ալ իրեն պէս պլտի ընէիք , ըտէք ինծի : Ես վստահ եմ որ ձեր բոլորին գրպանին մէջ հեղուկ մը կայ որ . . . :

Անշուշտ , անշուշտ , ընդմիջեցի , բայց եթէ նոյնիսկ հիւճանդն ուզէ , մենք չունինք զայն մեոցնիւու իրաւունքը : Արո՞ւ կը պատկանի կեանքը , ոչ հիւանդին , ոչ բժիշկին : Կեանքն Աստուծոյ կը պատկանի . . . :

Աստուծոյ . . . Աստուծոյ . . . ըսաւ ռազմիկ խօսակիցս փրփրելով : Մէկ կողմէ անագին ծախսեր , շէնքեր ու դարմաններ կ'ըլլուին անզամալոյծներու , ցաւազարներու , հոգևով մարմնով փտածներու , անբուժելի գառամածներու կեանքն ամէն զինով պահպանելու համար . . . մինչդեռ անդին , կուռի դաշտին վրայ , էն խօստմնալի ու էն առողջ երիտասարդները հազարներով , տասը հազարներով գետին կը փռուին յետոյքնէն զարնուած ու նապաստակներու պէս գլտոր դառնալով . . . ասոնց կեանքն ալ Աստուծոյ չի՞ պատկանիր , Տօքթէօր . . . :

— Կ'աղաչեմ , ընդմիջեցի , բայց ձեր վիրաւորը ընկերն ի՞նչ եղաւ :

— Մեր վիրաւորը ընկե՞րը : Աղբակոյտի մը վրայ պակեցուցեր էինք զայն , որպէսզի տար ըլլար : Կը զգուշանայինք կրակ վառելէ , վախնալով որ մի գուցէ ձիւնապատ դաշտերու մէջէն բարձրացող մեր մուխը թշնամիին տանէր զմեզ , Իւրաքանչիւրս հրացանի սառած երկաթին փարած՝ փոքրիկ լուսամուտներու ետին պահակ կը կենայինք , ճերմակ հորիզոնները լննելով փոխն ի փոխ : Ո՛չ իսկ շշուկ մը , ոչ իսկ լոյս մը կար ներսը : Կիսաստուերին մէջ՝ մատներնուս ծայրին վրայ կոխելով կը քալինք՝ մեռելի տան մը պէս . որովհետեւ մահը մեր մէջ էր , հոն էր սպառնական : Ու մեռելը հոն էր , կենդանի մեռելը . զի-

տապաստ, դիակնացած, կարծրացած, բայց այնքան տառապա-  
լից ու դեռ այնքան զգայուն, որ լոյսի նստագայթ մը զայն կը  
մտրակէր կարծես ու ձայնի շշուկ մը կը դողզողացնէր իր բա-  
րացած մարմինը՝ երկրաշարժէ մը ցնցուող տապանաբարի մը  
պէս... Վերաբոյժը պողարիւն իր ջերմութեան աստիճանը կը  
չափէր. — 39... 40... 41... 42... սարսափելի, սարսափելի  
...»։ Դանակի մը ծայրովն իսկ կարելի չէր բանալ իր կծկուած  
ակոսները, կաթիլ մը ջուր, պատառ մը հաց տալու իրեն։ Եթէ  
հիւանդութիւնն իսկ չ'ըլլար անօթութենէն պիտի մեռնէր, այս  
խնդհը։ Բայց վիրաբոյժն օրինապահ ու անայլալ՝

— Ես մեռցնելու իրաւունք չունիմ, ես մեռցնելու իրաւունք  
չունիմ... կը կրկնէր։

Այս սարսափելի օրերը՝ վեց օր, վեց դար տեսցին։ Առա-  
ւօտ մը երբոր ելանք, աչերը բաց՝ ան կը հսկէր։ Պրկուած  
մարմնին անկ հիզէն զարշապարները հողը փորած ու գանկն  
աղբին խրուած էր։ Զեռերն, ոտքերը շիվ-շիտակ, կզակները  
կղպուած, ճակատը ծալք-ծալք կծկտած, քրքիջի ձեւ մը շըրթ-  
ներուն, աչքերը պիշ-պիշ դուրս ինկած, ան պառկեր էր անա-  
ւոր։ Կարելի չէր նայիլ իրեն։ — «Բայց նայեցէր, մարմինը  
չդողար այսօր...» քսաւ մէկը շնջալով։

Աւ իրաւ ալ մարմինը չէր դողար։ Սակայն այնքան սարսափ  
ու տառապանք կար իր բաց աչքերուն մէջ որ ոչ որ համարձա-  
կեցաւ մատին ծայրով դպիլ իրեն, վախնալով որ նոր սարսուռ  
մը ծնցնէր։

— Մեռեր է... վճռեց բժիշկը, իր գլխարկը հաննով, ու  
բողբոս ալ հրացաննիս իջեցուցինք իր առջեւ։

Այսպէս վերջացաւ այս անվերջանալի, այս անաւոր, այս  
անմարդկային մահը, ինչ կ'ըսեմ, այս ոճիւրը, ոճիրներուն  
գլուխ-գործոցը...»

